

I

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԲԱԺԱՆՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (1915–1917թթ.)^{*}

ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ

Հայ գատի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունն ամբողջապես բացահայտվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ նրանց գիվանագիտական խոհանոցներում առևտուր էր գնում աշխարհի վերաբաժանման համար: Ռազմաճակատներում արգեն արյուն էր հեղվում և դեռևս դժվար էր նշմարել, թե երբ և ինչ ելքով էր ավարտվելու պատերազմը, սակայն պայքարը ուղեկից դաշնակիցներ որսալու համար շարունակվում էր:

Օսմանյան թուրքիային ավստրո-գերմանական բլոկից կտրելու ուղղությամբ Անդլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ջանքերը հաջողութ-յամբ չպսակվեցին: Նրանք սլատմության մեջ առաջին անգամ միավորվեցին և փոխադարձ զիջումների գնով համաձայնեցրեցին իրենց ծրագրերն ու գործողությունները Օսմանյան կայսրության նկատմամբ:

Թուրքիան, որ միշտ խաղացել էր եվրոպական երկրների ու Ռուսաստանի միջև գոյություն ունեցող հակասությունների վրա և միշտ շահել էր, այժմ զրկվել էր այդ խաղը շահելու հնարավորությունից, իսկ տարածաշրջանում ավանդաբար իրենց քաղաքական, տնտեսական, ռազմական, ֆինանսական, իրավական, առևտրական և այլ շահեր ունեցող տերությունները չէին կարող հաշտվել Փոքր Ասիան կորցնելու և այնտեղ Գերմանիայի դիրքերի ուժեղացման հետ:

1914թ. օգոստոսի 2-ին, համաշխարհային պատերազմն սկսվելուց երկու օր անց, ավարտվեցին մինչ այդ սկսված գերմանա-թուրքական գաղտնի բանակցությունները, որի հետևանքով այդ երկրների միջև կնքվեց ռազմական դաշինք: Սակայն հենց նույն օրը թուրքիան, հավատարիմ գիվանագիտական իր խաղերի ավանդույթին, հայտարարեց իր «չեզոքությունը» և նույնիսկ սկսեց սակարկել Անտանտի տերությունների հետ իր համար ընդունելի տարբերակով Գերմանիայի հետ կապերը խզելու պայմանների շուրջ: Թուրքիան ձգտում էր Գերմանիայի օգնությամբ գրավել Կովկասը, Ղրիմը և այլ տարածքներ, իսկ Գերմանիան թուրքիայի օգնությամբ՝ Միջագետքը, Բաղդադի երկաթուղին... Գերմանիան ռազմական մեծ վարկ տվեց թուրքիային, փոխարենը պահանջելով պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ:

* Ակադեմիկոս Գ. Գալոյանը հրատարակության է պատրաստում «Հայաստանը և մեծ տերությունները (XVI դար – 1917թ.)» մենագրությունը: Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում մի հատված այդ աշխատությունից (խմբ.):

Օդոստոսի 10-ին Գերմանիայից «գնած» երկու ռազմանավերը մտան Սև ծով: Թուրքական իշխանությունները, սակայն, չարունակում էին հավաստել ռուսական դեսպան Մ. Գիրսին, որ «քանի զեռ իրենք կանգնած են իշխանության գլուխ – Թուրքիան չեզոք է մնալու», որ «Թուրքիան ոչ ոքի հետ կապված չէ և կդործի իր շահերին համապատասխան», որ Թուրքիան ձգտում է դաշնակցել Ռուսաստանի հետ¹:

Այս «հավաստիացումներն» «ամրագրվեցին» Սև ծով մտած երկու ռազմանավերից հոկտեմբերի 29-ին ռուսական նավահանգիստների դնդակոծումով: Նույնիսկ դրանից հետո Պետրոգրադում Թուրքիայի հավատարմատարը այցելեց Ս. Սազոնովին, «ցավակցելով» «թյուրիմացություն» համար, իսկ Կ. Պոլսում մեծ վեղիր Սայիդ Հալիմ փաշան «արցունքներ թափեց», երբ Անգլիայի դեսպանը ներկայացավ նրան անձնագիրը հետ վերցնելու համար:

Խնազաքարտերը բացվեցին: Նոյեմբերին 2-ին Ռուսաստանը, իսկ 5-ին և 6-ին Անգլիան ու Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Թուրքիային: Նոյեմբերի 7-ին Ֆրանսիայի կառավարությունը դիմեց Ռուսաստանի և Անգլիայի կառավարություններին, առաջարկելով կազմել Թուրքիայի դեմ համատեղ գործողությունների ծրագիր: Այդ ծրագիրը հանդեցնելու էր Ասիական Թուրքիան Անտանտի տերությունների միջև բաժանելուն, որը գիվանազիտական սուր պայքարի առարկա էր դառնալու դաշնակիցների միջև:

Այլ պայմաններում այդ պայքարը կարող էր ոչ միայն խզել հարաբերությունները, այլև պատերազմի պատճառ դառնալ դաշնակիցների միջև: Սակայն գերմանական բլոկի սպառնալիքը ստիպում էր նրանց առժամանակ ետին պլան մղել իրենց միջև գոյություն ունեցող հակասությունները և միավորել ուժերը ընդհանուր գերթշնամու դեմ: Այժմ դաշնակիցները մեծ նշանակություն էին տալիս 1914թ. օդոստոսի 25(սեպտեմբերի 5)-ին կնքած համաձայնագրին, որով պարտավորվել էին, որպեսզի ամբողջ պատերազմի ընթացքում իրենցից որևէ մեկը անջատ պայմանագիր չկնքեր թշնամու հետ²:

Սեպտեմբերի 1-ին Անգլիայի արտգործնախարարությունը հայտարարեց, որ Թուրքիային այլևս չեն դիտում որպես «սևծովյան նեղուցների պահպան»: Արտգործնախարար է. Գրեյը նոյեմբերի 9-ին Լոնդոնում ռուսական դեսպան Ա. Բենկենդորֆին տեղյակ պահեց Գեորգ V թագավորի կարծիքին, որ պատերազմի հաղթական ավարտից հետո սևծովյան նեղուցների հարցը լուծվելու է հօգուտ Ռուսաստանի:

Այդ նույն օրը Անգլիայի պրեմիեր մինիստր Հերբերտ Ասկվիտը հայտարարեց, որ սուրը պատյան չի դրվի մինչև որ չըախջախվի Օսմանյան կայսրությունը, որի վերացմամբ «կվերանա այն վարակը, որը շատ սերունդների ընթացքում չորացրել է երկրագնդի գեղեցկագույն անկյունը»:

1 Раздел Азиатской Турции по секретным договорам бывш. министерства иностранных дел. М., 1924, с. 56, 57, 69.

2 *Տե՛ս* Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительства. 1878 – 1917. Серия III, 1914 – 1917, т. VI, ч. I, М., 1938, с. 214.

ները»³: Այդ օրերին Նիկոլայ II-ը ևս հայտարարեց, որ «Թուրքիային վերջ պետք է տրվի»⁴: Շուտով այս հայտարարություններին միացավ Ֆրանսիան:

Չնայած այս ամենին, երբ անգլիական ու ֆրանսիական ռազմանավերը մոտեցան Դարգանելին և 1915թ. փետրվարի վերջին օրերին սկսեցին գնդակոծել ծովափնյա թուրքական ամրությունները, ռուսական կառավարությունն անհանդստություն ասլրեց: Մտավախություն կար, որ նրանք կարող էին զավթել նեղուցները: Ռուսաստանը պահանջեց դաշնակիցներին պաշտոնապես հայտարարել, որ նեղուցները տրվելու են Ռուսաստանին:

Այդ հարցի կապակցությամբ մարտ-ապրիլ ամիսներին դաշնակիցների միջև նոտաների փոխանակություններ տեղի ունեցան, որոնք ամբողջությամբ վերցրած դիտվեցին որպես անդլո-ֆրանկո-ռուսական համաձայնագիր նեղուցների կարգավիճակի մասին: Ըստ այդմ Ռուսաստանին էին անցնելու Կ. Պոլիսը, Բոսֆորը, Մարմարա ծովի արևմտյան ափը և Դարդանելը, հարավային Թրակիան, Բոսֆորի և Սակարիա գետի միջև ընկած Փոքր Ասիայի ծովափը և հարակից այլ տարածքներ⁵: Այսպիսով, սեծովյան նեղուցների ամբողջական վերահսկողությունը հանձնվելու էր Ռուսաստանին:

Փոխարենը 1915թ. մարտի 4-ին Աագոնովը Նիկոլայ II-ի անունից հավաստիացրել էր դաշնակիցներին, որ նրանք «կարող են վստահ լինել, որ կայսերական կառավարության կողմից կհանգիպեն նույն կարգի ըմբռնման այն ծրագրերի իրագործմանը, որոնք կարող են հայտնվել նրանց մոտ՝ Օսմանյան կայսրության մարզերի և այլ վայրերի նկատմամբ»: Սկիզբ դրվեց Ասիական Թուրքիայի ռաժանմանը Անտանտի տերությունների միջև:

Բնական էր, որ Արևմտյան Հայաստանի կարգավիճակի և դրան հարակից հարցերը չէին կարող շրջանցվել: Այդ խնդրի շուրջ սուր վիճաբանություններ և անջատ բանակցություններ էին տեղի ունենում դաշնակիցների միջև: Փոխանակվեցին բազմաթիվ նոտաներ և հուշագրեր, որոնցից տվյալ պարագայում մեզ հետաքրքրում են Արևմտյան Հայաստանին առնչվող հարցերը:

Չնայած Արևմտյան Հայաստանը հայերի ցեղասպանության հետևանքով փաստորեն հայաթափվել էր, սակայն Ռուսաստանը չէր հրաժարվել այն նվաճելու ծրագրերից. կարևորվում էր տարածքի ռազմավարական նշանակությունը:

Բ. Բորյանը 1929թ. հրատարակած իր մենագրության հավելվածում գետեղել է մի ուշագրավ փաստաթուղթ՝ «Արտաքին գործերի մինիստրի

3 Шт'у Л о й д а ж о р д ж. Правда о мирных договорах. Т. 2, М., 1957, с. 218—219.

4 Раздел Азиатской Турции..., с. 95.

5 Л о й д а ж о р д ж. Նշվ. աշխ., էջ 387:

6 Раздел Азиатской Турции..., с. 88.

տեղեկանքը Մինիստրների խորհրդին Հայկական Հարցի վերաբերյալ»⁷: Այն գրված է 1916 թվականին: Հաշվի առնելով փաստաթղթի հեղինակի ով լինելը, այն բացառիկ նշանակություն ունի Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի տասնյակ տարիներ վարած քաղաքականության բուն էությունն ըմբռնելու համար:

Ռուսաստանի արտաքին քաղաքականության դերատեսչության ղեկավարը մեկ ամբողջության մեջ է դիտում սեփական նեղուցներին և Արևմտյան Հայաստանին տիրելու հարցը: Հիշեցնելով, որ «Պետրոս Մեծի ժամանակներից ի վեր Ռուսաստանի հիմնական խնդիրն է եղել ձգտումը՝ տիրելու աղատ ելքի դեպի Հարավային, չսառչող ծով...», նա ավելացնում է, թե այդ ընթացքում ինչ քայլեր են կատարվել նեղուցներին տիրելու «րազձալի նպատակին» հասնելու համար: Աազոնովը նշում է, որ այդ քայլերի ուղեկից հետևանքն է եղել Մերձավոր Արևելքում քրիստոնյաների պաշտպանությունը, այդ թվում հայերի, որոնց պաշտպանությունը Ռուսաստանի կողմից «պետական խնդիր» է համարվել:

Հակադրելով Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու Ռուսաստանի քաղաքականությունը Գերմանիայի վարած քաղաքականությանը, Սադոնովն արձանագրում է, որ Գերմանիայի հովանավորությունը «սուլթան Արդուլ Համիդը, սկսած (XIX դարի) 80-ական թվականներից, ձեռնամուխ է եղել հայերի ծրագրավորված բնաջնջմանը Հայաստանում ... հայերի բնաջնջումը Հայաստանում կատարվել է նրանց ֆիզիկական ոչնչացման – մի կողմից և հայկական տարրը Հայաստանում մահմեդական տարրերով նոսրացնելու միջոցով – մյուս կողմից: Այդ նպատակին հասնելու համար արհեստականորեն վերածեց են այժմյան վիրայիթները»: Սուլթանի այդ քաղաքականությունը հրահրվել ու պաշտպանվել է Գերմանիայի կողմից՝ «ապագա ռազմական դործողությունների թատերաբեմը էթնիկապես նախապատրաստելու համար»:

Սադոնովի «տեղեկանքում» ասվում է նաև, որ 80-ական թվականներից սկսած վերջին 35–40 տարիների ընթացքում Հայաստանում բնիկ հայերին արմատախիլ անելու նպատակով սուլթան Համիդը այնտեղ բնակեցնում էր քրդերին, մինչդեռ Քուրդստանը դանվում է Հայաստանից հարավ և հարավ-արևելքում:

«Հայերը, – կարդում ենք տեղեկանքում, – ապրում են իրենց տարածքներում ավելի քան երեք հազար տարուց ի վեր: Նրանց մոտ 80%-ը այնտեղ զբաղվում է հողագործությամբ, իսկ մնացածներն ապրում են քաղաքներում՝ զբաղվելով առևտրով ու արհեստներով... Հայերն առանձնապես են իրենց բարձր զարգացած խելամտությամբ, եռանդով ու աշխատասիրությամբ, առավել դյուրագրաց են եվրոպական կուլտուրայի ընկալման նկատմամբ և խորապես կապված են իրենց կրոնի և ազգության հետ: Հայերի այս վերջին հատկանիշները օգնել են նրանց հակազդելու մահմեդականների ճնշման ընդդեմ սարսափներին, մինչև այժմ անհողորդ պահպանելու իրենց ազգային հիմնախնդիրներն ու տարածքները և ...

7 Տե՛ս Բ. Ա. Բ օ ր ւ յ և. Армения, международная дипломатия и СССР. Ч. II, М. – Л., 1929, с. 413 – 419.

գրավել ամենաաչքի ընկնող գիրք Ասիական Թուրքիայի ժողովուրդների շարքում, չբացառելով իրենց իսկ թուրք-օսմաններին»:

Փաստաթղթում բացահայտված է Գերմանիայի երկդիմի խաղերի բնույթը, որոնց նպատակն էր իր ազդեցություն տակ պահել և՛ թուրքերին, և՛ հայերին:

Պատերազմն սկսվելուց հետո երիտթուրքերը ձեռնամուխ եղան հայերի ցեղասպանությանը, իսկ Գերմանիան ծրագրեր էր մշակում կոտորածներից մազապուրծ հայերին, որպես էժան աշխատուժ, տեղափոխել Բաղդադի երկաթուղու կառուցման վայրերը: Բոսֆորը Պարսից ծոցի հետ կապող 2400 կմ երկարության այդ երկաթուղու հիմնական հատվածի կառուցման և շահագործման կոնցեսիան Գերմանիան Թուրքիայից ձեռք էր բերել գեռևս XIX դարի վերջին: Ինչ վերաբերում էր արևմտահայերի տեղահանման գերմանական ծրագրին, այն պետք է ծառայեր երիտթուրքերի ռազմավարական նպատակներին՝ վերջնականապես հայաթափելու Արևմտյան Հայաստանը և «ազատված տարածքը» բնակեցնել մահմեդականներով⁸:

Հայ քաղաքական ուժերը ձեռքերը ծալած նստած չէին և չէին սպասում, թե ուրիշներն ինչպես պետք է լուծեին հայերին հուզող հարցերը: Մեծ ակտիվություն էր հանգես բերում գաղնակցական գործիչ Յա. Զավրիկը (Հակոբ Զավրյանը), որը ռուսական իշխանությունների օգնությամբ լոբբիստական աշխատանք էր տանում Ֆրանսիայում և Անգլիայում:

1915թ. ապրիլի սկզբներին նա այդ նպատակով մեկնեց Փարիզ և Լոնդոն: Ռուսաստանի արտգործնախարարի օգնական (ТОВАРИЩ МИНИСТРА) Ա. Ներատովը ապրիլի 4(17)-ի իր նամակով հանձնարարել է դեսպաններ Ա. Իզվոլսկուն և Ա. Բենկենդորֆին օժանդակել Յա. Զավրիկին, որն այդ երկրներ էր մեկնել «նրանց կառավարություններին և հասարակական կարծիքը հայոց պահանջների օգտին տրամադրելու համար...»: Զավրիկը Իզվոլսկու հետ ունեցած զրույցի ժամանակ հայտնել է նրան, որ ռուսական արտգործնախարարությունում իրեն տեղյակ են պահել, որ Ռուսաստանը «մտադիր է տերություններին առաջարկել Թուրքիայում ստեղծել ինքնավար Հայաստան Թուրքիայի գերիշխանության և երեք տերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի... հովանավորության ներքո: Հայաստանի տարածքը իբր թե պետք է ընդգրկի ոչ միայն հայկական բոլոր վիլայեթները... այլև Կիլիկիան»: Մայիսի 4(17)-ին Իզվոլսկին ոչ առանց զարմանքի հայտնելով այս մասին Սազոնովին, ավելացրել է, որ Զավրիկը և Պողոս-Նուբար փաշան արդեն այդ ոգով զրույց են ունեցել Ֆրանսիայի արտգործնախարարությունում: Իզվոլսկուն անհանգստացրել է հատկապես Կիլիկիան Հայաստանի մեջ ներառելու հարցադրումը, քանի որ Ֆրանսիան արդեն հայտնել էր ռուսական կառավարությանը Կիլիկիան իր ազդեցության գոտու մեջ մտցնելու մասին:

⁸ Հայաստանի նկատմամբ Գերմանիայի քաղաքականության բացահայտմանն է նվիրված պրոֆ. Ս. Սաեֆանյանի "Армения в политике империалистической Германии" (Ереван, 1975) ուղագրավ աշխատությունը:

⁹ Раздел Азиатской Турции..., с. 135.

Հաջորդ օրն իսկ Սաղոնովը հեռագրով պատասխանել է Իզվոլսկուն, որ «Հայերի հետ զրույցները զուտ ակադեմիական բնույթ են կրել» և որ Ջավրիևին հայտնվել է, որ Ռուսաստանը չի կարող պաշտպանել Հայերի ցանկութունը Կիլիկիան ապագա Հայաստանի կազմում մտցնելու հարցում, քանի որ այն մտնում է Փրանսիական շահերի ոլորտը¹⁰:

Հունիսի 1(14)-ին Իզվոլսկին հայտնել է Սաղոնովին, որ Պողոս-Նուբար փաշան Կիլիկիայի խնդրով հուշագիր է ներկայացրել Ֆրանսիայի արտգործնախարար Տ. Դելկասեին և որ ինքը (Իզվոլսկին) «փութկոտությամբ ձեռնպահ է մնում Ջավրիևի և Նուբար փաշայի ցանկութուններին որևէ օգնություն ցույց տալուց»¹¹:

1915թ. հունիսի 3(16)-ին Սաղոնովը հայտնել է Իզվոլսկուն, որ եթե «Հայ պատգամավորներին հաջողվի տրամադրել Փարիզի կաբինետին Կիլիկիան ապագա Հայաստանի մարզում մտցնելուն, ապա կայսերական կառավարությունը կարող է միայն կարեկցել թուրքահայերի ցանկութունների կատարմանը»¹²:

Նույն օրերին Ա. Բենկենգորֆը հաղորդել է Սաղոնովին, որ Նուբար փաշան համանման զրույցներ է ունեցել Լոնդոնում: Սաղոնովը Իզվոլսկուն հղած հեռագրերի ոգով պատասխանել է նաև Բենկենգորֆին:

Հետաքրքիր է նկատել, որ Լոնդոնում, Փարիզում, Հռոմում ուսական գեսպաններին Սաղոնովի հղած հեռագրերում, որոնցում շոշափվել են Հայաստանին առնչվող հարցեր, մեծ տեղ է հատկացվել այդ ժամանակ Եզրիպտոսում գտնվող Ջեմալ փաշայի և Կ. Պոլսի կառավարության միջև ծագած հակամարտությանը:

Ջեմալ փաշան պատրաստակամություն է հայտնել բացահայտ ապստամբություն բարձրացնել Կ. Պոլսի կառավարության դեմ, եթե եվրոպական տերությունները երաշխավորեն Ասիական Թուրքիայի անձեռնմխելիությունը և եթե Ջեմալ փաշան հռչակվեր սուլթան ժառանգական իրավունքով: Նա պարտավորվում էր նաև «անհապաղ ձեռնարկել միջոցներ հայերի փրկության և մինչև պատերազմի վերջը նրանց կերակրելու համար»:

Ջեմալ փաշան համաձայն էր նաև նեղուցները Ռուսաստանին տալուն¹³:

Բուխարեստում Ռուսաստանի դեսպանորդ Ս. Պոկլեվսկին 1915թ. դեկտեմբերի 12(25)-ին արտգործնախարարությունը հղած հեռագրում հաղորդել է, որ Ջավրիևը որոշակի պայմաններով հնարավոր է համարել Հայերի միջնորդությամբ բանակցություններ սկսել Ջեմալ փաշայի հետ:

Ֆրանսիան համաձայն չէր Ջեմալի առաջադրած պայմաններով նրա հետ համաձայնության գալուն, քանի որ Ռուսաստանն ստանալու էր նեղուցները, իսկ Ֆրանսիան հավանաբար զրկվելու էր Ասիական Թուրքիայում իր ակնկալելիք ձեռքբերումներից: Սաղոնովի հանգստացուցիչ հավաստիացումները ներգործություն չունեցան Ֆրանսիայի վրա:

10 Նույն տեղում, էջ 135–136:

11 Նույն տեղում, էջ 137–138:

12 Նույն տեղում, էջ 138:

13 Նույն տեղում, էջ 142–145:

Ա. Իզվոլսկին 1916թ. մարտի 9(22)-ին Սազոնովին հղած հեռագրում հաղորդում էր, որ Ջեմալ փաշայի հետ բանակցություններ սկսելու հարցի վերաբերյալ Ջավրիևը հանդիպում էր ունեցել վարչապետ Բրիանի հետ և որ վերջինս հետո իրեն ասել է, թե ինքը «անհարմար է գտնում Ջեմալի հետ ինչ-որ բանակցությունների մեջ մտնելը»¹⁴:

Ըստ էությունից Անգլիան ևս վստահություն չէր ցուցաբերում Ջեմալի ծրագրերի նկատմամբ, չնայած կարևորում էր ցանկացած ուժերի միջոցով Թուրքիայում խլրտումներ առաջացնելը:

Մարտի վերջերին ռուսական կառավարությունը երկու անգամ անդրադարձել է Ասիական Թուրքիայի բաժանման անգլո-ֆրանսիական առաջարկներին:

Այս ընթացքում Անգլիայի կառավարության արտակարգ լիազոր Սարկ Սայքսը և ֆրանսիական դիվանագետ Ժորժ Պիկոն, որոնց հանձնարարված էր կազմել Ասիական Թուրքիայի բաժանման համաձայնագրի նախագիծը, արդեն փոխադարձ համաձայնություն էին եկել վիճելի հարցերի շուրջ:

Ապրիլի 26-ին Ռուսաստանը և Ֆրանսիան, իսկ մայիսի 9-ին և 16-ին Անգլիան և Ֆրանսիան ստորագրել էին համաձայնագրեր խնդրո առարկա հարցի վերաբերյալ: Ռուսական դիվանագետներին հաջողվեց մինչև համաձայնագրի վերջնական տեքստի խմբագրումը նրանում մտցնել մի շարք փոփոխություններ ի օգուտ Ռուսաստանի: Սակայն, ամբողջությամբ վերցրած, այն չէր բավարարում Ռուսաստանի հավակնությունները: Այդ համաձայնագիրը, որին ավելի ուշ միացավ նաև Իտալիան, դիվանագիտությունից պատմության մեջ մտավ որպես Սայքս-Պիկոյի համաձայնագիր՝ նրա տեքստը կազմած անգլիական և ֆրանսիական դիվանագետների անունով: Հստակեցվեցին Ռուսաստանի և եվրոպական մյուս տերությունների դիրքորոշումները Հայաստանի նկատմամբ:

Հայ ընթերցողի համար բացառիկ հետաքրքրություն ներկայացնող, բայց և մոռացության տրված այդ հարցերին արժե անդրադառնալ հանգամանորեն:

Ըստ Անտանտի տերությունների կողմից մշակած Ասիական Թուրքիայի բաժանման ծրագրի, Մեծ Հայքը և Փոքր Հայքը մտնելու էին տարբեր տերությունների գոտիների մեջ և դրանով իսկ հայկական տարածքները տարրալուծվելու էին:

1916թ. փետրվարի 25(մարտի 9)-ին Սայքսը և Պիկոն ժամանեցին Պետրոգրադ և ռուսական կառավարության քննարկմանը ներկայացրեցին իրենց մշակած նախագիծը: Պահր պատահական չէր ընտրված: Այդ ժամանակ ռուսական զորքերն արդեն գրավել էին էրզրումը և Բիթլիսը: Նրանց հետագա առաջխաղացումը դեպի Իրաք և Սիրիա կանգնեցնելու համար անհրաժեշտ էր արագացնել համաձայնագրի կնքումը և հստակեցնել, թե ում ինչ տարածք էր անցնելու Ասիական Թուրքիայից:

Մի քանի օր անց Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը Նիկոլայ II-ին գրավոր զեկույց ներկայացրեց Անգլիայի և Ֆրանսիայի

14 Նույն տեղում, էջ 167:

ներկայացուցիչների հետ ունեցած բանակցությունների և նրանց կողմից արվող առաջարկությունների մասին:

Անգլիան և Ֆրանսիան հավաստել էին իրենց իրատու մը՝ պատերազմի հաղթական ավարտից հետո Ռուսաստանի «տրամադրություն տակ գնել» Օսմանյան կայսրության այն տարածքը, «որն ընկած է Սև ծովի և այն գծի միջև, որն սկսվում է Ուրմիա լճից և Վանից, Բիթլիսից, Մուշից և Խարբերդից գեպի հարավ՝ Տավրոսի և Անտիտավրոսի լեռնաշղթաների վրայով և դնում է գեպի Ամանոս»¹⁵:

Ըստ Ասյքս-Պիկոյի համաձայնագրի Ֆրանսիայի տիրապետությանն էին անցնելու Արևիայի և Կիլիկիայի ափամերձ շերտը, Փոքր Հայքը, Քուրդստանի մի մասը և այլ տարածքներ, որոնք ընկած էին Ռուսաստանի համար նախատեսվող սահմանից գեպի հարավ:

Անգլիան ստանալու էր Միջագետքը (Բաղդադի հետ միասին) և Իրաքի այն տարածքները, որոնք հարում են Պարսկաստանին և Պարսից ծոցին (առանց Մոսուլի):

Ֆրանսիական և անգլիական տիրապետությունների միջև ընկած ամբողջ տարածքում ստեղծվելու էր արաբական անկախ խալիֆայություն կամ արաբական մի քանի իշխանությունների ֆեդերացիա: Այդ ֆեդերացիան ղիսավորող արաբ առաջնորդը գտնվելու էր Ֆրանսիայի և Անգլիայի հովանավորության այն է վերահսկողության տակ:

Պաղեստինը կազմելու էր մի հատուկ ինքնավար նահանգ՝ միջագալին վերահսկողության ներքո¹⁶: Ֆրանսիան Պաղեստինը համարում էր Սիրիայի մի մասը և ձգտում էր այն մտցնել ֆրանսիական գոտու մեջ: Դաշնակիցները չհամաձայնեցին:

Ալեքսանդրետը և Անգլիայի տիրապետության տակ անցնող Հայֆա նովահանգիստը հայտարարվելու էին ազատ նավահանգիստներ Արևելքի հետ Անգլիայի և Ֆրանսիայի ազատ առևտրի հնարավորությունն ապահովելու համար:

Եթե իրագործվեր Սայքս-Պիկոյի համաձայնագիրը, Փոքր Ասիայի քարտեզը բոլորովին այլ տեսք էր ստանալու, իսկ այդ տարածաշրջանում ապրող ժողովուրդները, քնից արթնանալով, անկախ իրենց կամքից, հայտնվելու էին նորաստեղծ միավորումներում, ինչի մասին նրանք իմանալու էին պոստ-ֆակտում: «Արաբները, — դրում է իր հուշերում Լլոյգ Ջորջը, — տեղյակ չէին բանակցությունների մասին... երբ արաբական առաջնորդները իմացան համաձայնության մասին, նրանք, բնականաբար, վիրավորվեցին... բայց շուտով (արաբների առաջնորդը — Գ. Գ.) սահմանափակվեց նրանով, որ ձևականորեն հրաժարվեց համաձայնագիրը ճանաչելուց: Իտալացիները ևս շատ կատաղել էին, քանի որ համաձայնագիրը կնքվել էր առանց իրենց հետ խորհրդակցելու և առանց իրենց գիտություն... Իտալացիների համաձայնությունը ստիպված եղան գնել՝ Անատոլիայում նրան տարածքային զիջումներ խոստանալով, ինչը նոր դժվար

15 Նույն տեղում, էջ 154–157:

16 Նույն տեղում, էջ 178–182:

րություններ հարուցեց: Իսկ երբ եկավ համաձայնագիրն իրագործելու ժամանակը, բոլորը խոստովանեցին, որ այն բոլորովին անիրագործելի է»¹⁷:

Ռուսները ևս բավարարված չէին ձեռք բերածով: Նախատեսվող ռուսական ասիական սահմանագծի մեծ երկայնության վրա հայտնվելու էր Ֆրանսիան: Այդ «տհաճ հարևանության» հեռանկարը նյարդայնացնում էր Պետրոգրադին:

Անգլիացիների և ֆրանսիացիների կողմից առաջարկվող սահմանադիժը, որն անջատելու էր ռուսական ապագա տիրությունները ֆրանսիականից, Սազոնովի կարծիքով քաղաքական և ռազմավարական տեսակետից Ռուսաստանի համար անընդունելի էր, քանի որ Ֆրանսիան «մխրճվում էր» ռուս-պարսկական սահմանագծի մեջ: Սազոնովը գերադասելի էր համարում, որպեսզի Ռուսաստանը հարավում ընդհանուր սահման ունենար որևէ ասիական մուսուլմանական պետության, թեկուզև ինչ-որ կերպ պահպանվող Թուրքիայի, քան թե Ֆրանսիայի հետ:

Արևմտյան Հայաստանն արդեն չէր դիտվում որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, որը կարող էր «մխրճվել» ռուս-ֆրանսիական սահմանագծի մեջ: Նա այլևս դիտվելու էր որպես ռուսական տարածք:

Անգլիայի և Ֆրանսիայի հետ բանակցությունների ժամանակ Ռուսաստանը համաձայնել էր, որ եթե Ուրմիայի գավառը և Բիթլիսի անցուղիները տրվեն Ռուսաստանին, ապա որպես «որոշ վարձահատուցում» կարելի էր Ֆրանսիային զիջել որոշ տարածքներ՝ Սվազ-Նարբերդ-Կեսարիա եռանկյունում:

«Կշռադատելով» Ռուսաստանի այս առաջարկը, Անգլիայի կառավարութայն արտակարգ չիազոր Մարկ Սայքսը 1916թ. մարտի 12-ին նամակով¹⁸ հանձնարարեց Պետրոգրադում Անգլիայի դեսպան Զ. Բյուքենենին այդ կապակցությամբ Ռուսաստանի արտգործնախարար Ա. Սազոնովին ներկայացնել իր տեսակետները, որոնք նախօրոք համաձայնեցված էին Ֆրանսիայի կառավարութայն հետ: Մարկ Սայքսն այն կարծիքին էր, որ իր տեսակետները «կարող էին հետաքրքրություն ներկայացնել պ-րն Սազոնովի համար»:

Մ. Սայքսի հանձնարարականում ոչ մի խոսք չէր ասվում տարածաշրջանում Անգլիայի կողմից հետապնդվող շահերի մասին, մինչդեռ Ռուսաստանին արվող առաջարկների նպատակը հենց այդ շահերի պաշտպանությունն էր ապահովելու: Զ. Բյուքենենին հանձնարարվում էր ռուսական կառավարութայնը մտքեր ներշնչել, որ արվող առաջարկները բխեցվում են Ռուսաստանի շահերից: Բայց ըստ էութայն դրանք հետապնդում էին մի նպատակ որքան հնարավոր էր սահմանափակել Ռուսաստանին անցնելիք հայկական տարածքները և անհնար դարձնել այդ տարածքներից հայկական պետութայն ստեղծումը:

17 Л а о й А Д ж о р д ж. նշվ. աշխ., էջ 215:

18 Раздел Азиатской Турции..., с. 158—159; Esat Uras. The Armenians in History and the Armenian question. Ankara-London, 1988, p. 897—899. Հայաստանը միջազգային դիվանագիտութայն և սովետական արտաքին քաղաքականութայն փաստաթղթերում. Երևան, 1972, էջ 385—389:

Ընդունելով, որ «Հայկական վերջին կոտորածների ծայրահեղ դաժանությունը և անգթությունը հետևանքով չի կարելի հանդուրժել բուն Հայաստանը օսմանյան իշխանություն տակ թողնելու հնարավորությունը», Մ. Սայքսը առաջ է քաշել Հայկական հարցը լուծելու չորս հնարավոր տարբերակ.

Ա) «Եթե հիմնվի հայկական պետություն թուրքական սյուզերենությունների ներքո», այսինքն, եթե ստեղծվեր «ընդհանուր պետություն»: Այս տարբերակը նա համարում էր «ոչ կենսունակ ծրագիր», քանի որ դա կնշանակեր ստեղծել «Կովկասում ինտրիգներ սարքող երկրորդ Բուլղարիա»: Բացի այդ, այս դեպքում, ըստ Մ. Սայքսի, հայերը ի վիճակի չէին լինի մրցակցելու քրդերի հետ:

Բ) «Եթե ստեղծվի միջազգային վերահսկողության տակ գտնվող և չեզոք (°) կառավարիչներ ունեցող հայկական կառավարություն»: Այս տարբերակը համարվում էր «մշտական բանասրկությունների և «հարցերի» համար լայն հնարավորությունների» տարբերակ, որից վաղ թե ուշ կարող էր օգտվել Գերմանիան: Այս «փաստարկը», ըստ փաստաթղթի հեղինակի, անմիջապես պետք է հարուցեր Ռուսաստանի բացասական վերաբերմունքը նշված տարբերակի նկատմամբ:

Գ) «Եթե Հայաստանը՝ առանց նախապատրաստության և լիովին հանձնվի Ռուսաստանին»: Այս տարբերակը ամբողջ XIX դարի ընթացքում խիստ անընդունելի տարբերակ էր համարվում Անգլիայի և Ֆրանսիայի համար, քանի որ այդ դեպքում անառարկելիորեն կամրապնդվեին Ռուսաստանի դիրքերը ողջ Մերձավոր Արևելքում և սևծովյան նեղուցներում: Սակայն Մ. Սայքսը ձգտում էր համոզել Ս. Սազոնովին, որ Ռուսաստանի բուն շահերից ելնելով, այժմ այդ տարբերակը ևս անընդունելի էր, քանի որ «ռուսական քաղաքական համակարգի մեջ կներառվի մի երկիր, որը լեփ-լեցուն է Կովկասում և Պարսկաստանում գոյություն ունեցող հեղափոխական կազմակերպությունների հետ մշտական կապերի մեջ գտնվող հեղափոխական ընկերություններով»: Իր այդ «եզրահանդումը» Մ. Սայքսը «հիմնավորում է» մի «զորեղ» փաստարկով, որ իբր թե «մի Հայ հեղափոխական (դաշնակցական) մի անդամ» իրեն «ասել է, որ դա հիանալի կլիներ» տարածաշրջանի հեղափոխական ընկերությունների համար, քանի որ հնարավորություն կստեղծվեր նրանց կենսունակության պահպանման համար: Եվ այսպես, «ելնելով Ռուսաստանի շահերից», Մ. Սայքսը այս տարբերակը ևս անընդունելի էր համարում Հայկական հարցը լուծելու համար:

Բայց գիտակցելով, որ Հայկական հարցին, այնուամենայնիվ, ինչ-որ լուծում պետք է տրվեր, Մ. Սայքսը, մերժելով իր իսկ կողմից առաջ քաշված երեք հնարավոր տարբերակները, Ս. Սազոնովին է հրամայում Անգլիայի և Ֆրանսիայի միջև անջատ ձեռք բերված համաձայնությունում մի նոր գործ տարբերակ:

Դ) «Եթե հարցը լուծվի այնպես, որ նախկին հոռմեական կամ Փոքր Հայքը հանձնվի Ֆրանսիային»: Մ. Սայքսը ձգտում էր համոզել Սազոնովին, որ այդ տարբերակը «չափազանց ձեռնտու է Ռուսաստանին», որովհետև «Փոքր Հայքի հայերն ունեն կրեական և պահպանողական

տրամադրութիւններն ի տարբերութիւն կովկասյան և արևելյան հայերի, որոնք անարխո-սոցիալիստներ են»:

Իրականում Անգլիային և Ֆրանսիային անհանգստացնում էր Ռուսաստանի հնարավոր հղորացումը, եթե նա տիրեր ամբողջ Հայաստանին և դրանով իսկ դառնար «տհաճ հարևան» Մոսուլի նավթահանքերին¹⁹:

Այսպիսով, ըստ Սայքս-Պիկոյի մշակած համաձայնագրի, Հայաստանը բաժանվելու էր երկու մասի, ընդ որում բուն Հայաստան էր համարվելու Ֆրանսիային տրվող Փոքր Հայքը: Ֆրանսիական գոտու մեջ էին առնվելու Զեյթունը, Հաճնը, Դիարբեքիրը, Սվազը և այլ վայրեր:

Այս տարբերակը Ռուսաստանի համար գրավիչ դարձնելու նպատակով Մ. Սայքսը Սազոնովին փորձում էր համոզել, որ «Փոքր Հայքի հայերը կապված չեն Կովկասի հայ արդյունաբերողների հետ և, իսկապես, ընդհանուր քիչ բան ունեն նրանց հետ», և որ այդ տարբերակի իրականացման դեպքում նրանք Ռուսաստանին գլխացավանք չեն պատճառի: Ավելին, Մ. Սայքսը, դարձյալ «ելնելով Ռուսաստանի շահերից», գտնում էր, որ «լավ կլինեք, եթե դա միայն հնարավոր է, Մուշի դաշտավայրը մտցնել Ֆրանսիական գոտու մեջ, որովհետև դա Ռուսաստանին կազատեր հեղափոխական գործունեության օրրանից և կովկասյան հեղափոխականների պրոպագանդայի համար ամենապիտանի մարզերից մեկը կկտրեր նրանց գործունեության ոլորտից»: «Ռուսական շահերից ելնելով, — դրում է Մ. Սայքսը, — լավ կլինեք, որ այդ մարզը ռուսական չլինեք»:

Իսկ ինչ էր առաջարկվում Ռուսաստանին. «Ռուսաստանն ստանում է էրզրումը, Բիթլիսը և Վանը՝ աննշան քանակութան հայ բնակչութամբ»: Մ. Սայքսը գտնում էր, որ դա Ռուսաստանի համար ընդունելի առաջարկ կարող էր լինել, քանի որ Ռուսաստանն ստանալու էր ռազմավարական կարևոր նշանակութիւն ունեցող տարածք, «աննշան քանակութան հայ բնակչութամբ», որտեղ ռուսները կարող էին իրենց հայեցողութամբ այլազգիներ բնակեցնել: Ռուսաստանին տրվող տարածքը չէր դիտվելու որպես Հայաստան, քանի որ Ֆրանսիան ստանում էր Փոքր Հայքը «որպես Հայաստան և Ֆրանսիական գոտին լինելու էր հայկական ազգային զգացմունքի կենտրոն»: Այն հռու էր լինելու Ռուսաստանից ու արևելահայերից: Դա ազատելու էր Ռուսաստանին Արևելյան և Արևմտյան Հայաստանների հնարավոր միավորման և Ռուսաստանից անջատվելու վտանգից: Մ. Սայքսը «բարեկամաբար» վախեցնում էր Ս. Ասազոնովին, որ «եթե հայկական ազգային զգացմունքի կիզակետը լինեք էրզրումը», անարխո-սոցիալիստներն իրենց ձեռքը կվերցնեին հայկական քաղաքական ամբողջ մեխանիզմը և կամրացնեին այն, քանի որ «Վանի և էրզրումի ժողովրդական երգերն ու ավանդույթները... հայկական անարխո-սոցիալիստական պրոպագանդայի գաղափարական հիմքն են»:

Այս դիվային խարդավանքով Մ. Սայքսը փորձում էր համոզել Սազոնովին իր կողմից առաջարկվող նախագծի «ռուսամետութիւնը»:

19 Раздел Азиатской Турции..., с. 92.

Կովկասյան ռազմաճակատում տարած հաղթանակները Ռուսաստանի կառավարությունը թեև վերցրեցին պահանջելու դաշնակից տերուրությունների համաձայնությունը, որպեսզի Ռուսաստանը անեքսիայի ենթարկեր էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներն ու այլ տարածքներ, որպես պատերազմի իրավունքով գրավված տարածք: Այդ պահանջները ձևակերպված էին Ս. Սադոնովի՝ Պետրոգրադում Ֆրանսիայի գեսպան Մորիս Պալեոլոգին հասցեագրված 1916թ. ապրիլի 26-ի հուշագրում:

Ֆրանսիական կառավարությունն անհապաղ, իսկ անգլիականը՝ մայիսի 23-ին տվեցին իրենց համաձայնությունն այդ պահանջների վերաբերյալ: Սակարկությունը գաշնակիցների միջև մեծ վիճաբանություններ չհարուցեց, քանի որ խոսքը վերաբերում էր գեո «չսպանած արջի մորթին» բաժանելուն:

Բացի գրանից, մինչ այդ՝ 1916 թ. մարտի 4(17)-ին, Ռուսաստանի կառավարությունը տեղեկացրել էր Պետրոգրադում Ֆրանսիայի և Անգլիայի գեսպաններին, որ «ինքը ոչ մի շահագրգռվածություն չունի այն մարդերում», որոնք, ըստ Սայքս-Պիկոյի համաձայնագրի նախագծի, մտնելու էին Անգլիայի և Ֆրանսիայի համար նախատեսվող գոտիների մեջ:

Ռուսաստանի արտգործնախարարությունը կրկին հիշեցնում էր իր գաշնակիցներին, որ անգլո-ֆրանսիական համաձայնագրի հետ Ռուսաստանի համաձայնությունը պայմանավորված է նրանով, որ պետք է իրագործվեր Կ. Պոլսի և նեղուցների վերաբերյալ վերը նշված ֆրանս-անգլո-ռուսական փոխադարձ համաձայնությունը: Դա այն գերխնդիրն էր, որին, սկսած Պետրոս Մեծի ժամանակներից, ձգտում էր Ռուսաստանը և որով սլայմանավորված էին XVIII. և XIX դարերում վարած ռուս-թուրքական պատերազմները: Սակայն Ռուսաստանի տարած հաղթանակները չէին ամրագրվում միջազգային պայմանագրերով, քանի որ Անգլիան և Ֆրանսիան մշտապես հանգես էին գալիս ի պաշտպանություն Թուրքիայի, որին համարում էին «նեղուցների պահպան»:

Այժմ չէր բացառվում, որ սևծովյան նեղուցների վերահսկողությունը կարող էր անցնել Գերմանիայի ձեռքը: Դաշնակից տերուրությունների համար այդ հնարավոր աղետը կանխելու միջոց էր համարվում Կ. Պոլսը և նեղուցները Ռուսաստանին հանձնելը, ինչը և խոստացան Անգլիան ու Ֆրանսիան:

Բացի գրանից, Ռուսաստանը պատրաստ էր համաձայնել Ասիական Թուրքիայի նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի նկրտումներին, եթե նրանք բավարարեին Ռուսաստանի տարածքային պահանջները:

Այդ դեպքում կբացառվեր Գերմանիայի և Թուրքիայի հետ Ռուսաստանի անջատ պայմանագիր կնքելը և Ռուսաստանին կպահեր պատերազմի մեջ մինչև նրա հաղթական ավարտը: Իհարկե, միամտություն կլիներ հավատալ, որ նույնիսկ պատերազմի հաղթական ավարտից հետո Անգլիան և Ֆրանսիան հավատարիմ կմնային իրենց խոստումներին: Սակայն առանց այդ էլ Անգլիան և Ֆրանսիան Սայքս-Պիկոյի համաձայնագրով այնպես էին գծել իրենց ազդեցությունը գոտիների սահմանները, որ

սևծովյան նեղուցները բոլոր դեպքերում գտնվելու էին իրենց վերահսկողութեան ներքո:

Կնքվելիք համաձայնագրի իրագործման երաշխիքները աննշան էին, բայց կողմերի փոխադարձ կախվածությունը միմյանցից հույս էր ներշնչում բանակցությունները շարունակելու համար:

1916թ. ապրիլի սկզբներին Ս. Սաղոնովը և Ժորժ Պիկոն բանակցություններ էին վարում Ռուսաստանի կողմից անգլո-ֆրանսիական կնքվելիք համաձայնագրի ճանաչման պայմանների վերաբերյալ:

Ս. Սաղոնովը ապրիլի 13(26)-ին հուշագիր ներկայացրեց Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպանին: Հուշագրում նշվում էր, որ Ռուսաստանի կայսերական կառավարությունը պատրաստ է հավանություն տալ Անդլիայի և Ֆրանսիայի միջև կնքվելիք համաձայնագրին՝ արաբական պետությունների ֆեդերացիա կազմավորելու և Սիրիայի, Կիլիկիայի ու Միջագետքի տարածքների պատկանելության վերաբերյալ, եթե պահպանվեն հետևյալ պայմանները.

«1. Ռուսաստանը անեքսիայի է ենթարկում էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի մարզերը մինչև Սև ծովի ափի՝ առաջիկայում որոշվելիք այն կետը, որն ընկած է լինելու Տրապիզոնից դեպի արևմուտք:

2. Վանից և Բիթլիսից դեպի հարավ ընկած Քուրդստանի մարզը կզիջվի Ռուսաստանին...»:

Ռուսաստանի կառավարությունը դրա փոխարեն «Ֆրանսիայի սեփականություն կճանաչի» այն տարածքները, որոնք նախատեսվում էին մտցնել ֆրանսիական գոտու մեջ: Ռուսական կառավարությունը համաձայն էր նաև «այս ձևով Ռուսաստանին զիջված օսմանյան տարածքի բոլոր մասերում թույլատրել, որ պահպանվեն օսմանյան կառավարության կողմից ֆրանսիական քաղաքացիներին տրված երկաթուղային և մյուս կոնցեսիաները»: Առաջարկվում էր նաև հաշտության պայմանագիրը կնքելուց հետո սուրի հարթել ռուս-ֆրանսիական բանակցությունների համար՝ Ֆրանսիային և Ռուսաստանին անցնելիք դոտիններում այլ շահերի փոխադարձ պաշտպանության վերաբերյալ²⁰:

Ռուսաստանի համար օրակարգի հարց էր դարձել նրա զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքների կառավարման հարցը, որը դեռևս դե յուրե ներառված չէր կայսրության սահմանների մեջ: 1916թ. հունիսի սկզբներին Նիկոլայ II-ը հավանություն էր տվել «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքիայի մարզերի կառավարման» ժամանակավոր կանոնակարգի նախագծին: Այդ նշանակում էր, որ այն կիրառման մեջ էր դրվում:

Նախ պետք է լուծվեր այդ տարածքի ապագա կառուցվածքի հարցը: Ս. Սաղոնովը գտնում էր, որ վաղաժամ էր փորձ անել սահմանելու նվաճված երկրում ներքին քաղաքականության հիմունքները, մանավանդ որ ռուսական կառավարության առջև կանգնած էր առաջնակարգ միջադրային հարց դարձած Հայկական հարցի լուծման խնդիրը: Այս առումով հետաքրքիր են Ս. Սաղոնովի նոր մոտեցումները, որոնք շարադրված են

20 Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 391–393:

կովկասում Վորոնցով-Դաշկովին փոխարինած մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին հղած 1916թ. հունիսի 14(27)-ի նամակում²¹:

Իրոք խնդրի լուծումը բարձր էր: Մի կողմից ռուսական կառավարության ձեռքերը կաշկանդում էին ասորիների ընթացքում առաջ քաշած նրա ծրագրերը՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ, իսկ մյուս կողմից՝ նրա քաղաքական հայեցակետին անհարիր էր Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալը, քանի որ այդ դեպքում անխուսափելիորեն ծառանալու էր Երևանի նահանգի հետ առնչվող խնդիրը: Ռուսաստանը չէր կարող հաշվի չառնել նաև, որ իր համաձայնությունամբ պատմական Հայաստանի մյուս մասը՝ Փոքր Հայքը, «որպես Հայաստան» անցնելու էր Ֆրանսիայի դերիշխանության տակ:

Սազոնովը փոխարքայի ուշադրությունն էր հրավիրում Հայկական հարցի լուծման երկու իրար ծայրահեղ հակադիր տարրերակների վրա, որոնք առաջ էին քաշվում տարբեր ուժերի կողմից:

«Դրանցից մեկը, — գրում է նա, — հայ ազգայականների ձգտումն է — 1913 թվականին մեր առաջարկած բարենորոգումների (Արևմտյան Հայաստանում — Գ. Գ.) ոգուն համապատասխան Ռուսաստանի հովանու տակ հասնել կատարյալ ինքնավարության, իսկ մյուսը՝ որը հակադիր է սրան, ձգտում է հայերի քաղաքական նշանակությունը հավասարեցնել գերոյի, փորձելով նրանց տեղը դնել մահմեդականներին»:

Երկու տեսակետներն էլ, որոնց վրա ուշադրություն են դրսևորում ժամանակակից թուրք պատմաբանները²², Սազոնովը անհարիր է համարել Ռուսաստանի պետական շահերին: Նկատի առնելով, որ Անդլիայի և Ֆրանսիայի հետ համաձայնություն էր ձեռք բերվել Մեծ Հայքը անեքսիայի ենթարկելու մասին, ցարական Ռուսաստանի պետական այրերն արդեն աննպատակահարմար էին համարում Արևմտյան Հայաստանում հայերին լայն ինքնավարություն տալը, դտնելով, որ այն «բացարձակապես չի համապատասխանում Ռուսաստանի պետական շահերին»: Դա նշանակում էր, որ Ռուսաստանը փաստորեն հրաժարվում էր XIX դարի երկրորդ կեսից ի վեր արևմտահայերին լայն ինքնավարություն տալու իր որդեգրած քաղաքականությունից:

Քաղաքական այդ շրջադարձը Սազոնովը պայմանավորում էր նրանով, որ «հայերի նկատմամբ պատերազմի ժամանակ Թուրքիայի գործադրած պատժիչ միջոցառումներից»²³ հետո, որոնք հայերի իսկ վկայությամբ ահավոր չափերի են եղել... (հայերը) հազիվ թե կազմելիս լինեն բնակչության քառորդ մասը: Այսպիսի պայմաններում, — եզրակացնում էր նա, — հայկական ինքնավարությունն իրականում կհանդեցնի փոքրամասնության կողմից մեծամասնության անարդար ստրկացմանը»:

Չնայած Սազոնովը մերժելի էր համարում նաև այն կարծիքը, ըստ որի հայկական տարրը պետք է ենթարկվեր մահմեդականներին, ինչը

21 Раздел Азиатской Турции..., с. 207—209.

22 E s a t U r a s . Նշվ. աշխ., էջ 899:

23 «Պատժիչ միջոցառումներ» ձևակերպումը շրջանառության մեջ էր գրել Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Ն. Վանգենհայմը 1915թ. օգոստոսի 4-ին Թուրքիայի մեծ վեզիրին հղած հուշագրում:

կնշանակներ հայերին գնել ավելի վատթար կացութեան մեջ, չի կարելի չդատապարտել հայոց ցեղասպանութեան գրգռապատճառներին տված նրա գնահատականը: Հայոց ցեղասպանութիւնը թուրքիայում համարելով «թուրքիայի գործադրած պատժիչ միջոցառումներ», Սազոնովը հակասում էր իր իսկ վկայութեանը, որ Աբգուլ Համիդը դեռևս 80-ական թվականներին «ձեռնամուխ էր եղել հայերի ծրագրավորված բնաջնջմանը Հայաստանում...»: Այժմ, մեղանշելով պատմական ճշմարտութեան առաջ, Սազոնովը ջուր էր լցնում երիտթուրքերի ջրաղացին:

Արևմտահայերին լայն ինքնավարութիւն տալու ծրագիրը, որը նախկինում բոլոր տերութիւններից առավել եռանդաւոր Ռուսաստանն էր պաշտպանում, այժմ այդ նույն Ռուսաստանի պետական այրերը առաջարկում էին այն փոխարինել «հայերին որոշակի շրջանակներում դպրոցական և եկեղեցական անկախութեան և մայրենի լեզվից օգտվելու իրավունք» վերապահելով:

Այսուհանդերձ Սազոնովը հասկանում էր, որ հարցի նման լուծումը կարող էր Ռուսաստանին գնել «անհարմար գրութեան մեջ» և ստիպել ռուսահպատակ հայերին «նախանձով լի հայացքներն ուղղել դեպի իրենց արտասահմանյան հայրենակիցները (Փոքր Հայքում – Գ. Գ.), որոնց համար այս կամ այն կերպ ապահովված կլինի ազատ զարգացումը»:

Այսպիսով, եթե ցարական Ռուսաստանը պատերազմից դուրս գար հաղթանակով, Ռուսաստանին անցնելիք Արևմտյան Հայաստանի տարածքների հայերը պետք է «բավարարվեին» կուլտուր-ազգային «իրավունքների» վերանջնջումով: Սա այն վերջակետն էր, որ դրվելու էր Հայկական հարցին:

Նիկոլայ Նիկոլաևիչը Սազոնովին 1916թ. հունիսի 3(16)-ին հղած պատասխանում ուղղակի նշում էր իր լիակատար համաձայնութիւնը նրա տեսակետներին, ընդգծելով, որ «Ռուսական կայսրութեան այժմ գոյութիւն ունեցող սահմաններում Հայկական հարց ... բնավ գոյութիւն չունի, և պետք է անգամ թույլ տալ հիշեցում այդ մասին»: Իր այդ «Հայտնագործութիւնը» մեծ իշխանը հիմնավորում էր նրանով, որ Հայկական հարցը գոյութիւն ունեւ «պատերազմից առաջ եղած կայսերական սահմաններից դուրս», իսկ այժմ, երբ Արևմտյան Հայաստանը ներառված էր կայսրութեան սահմանների մեջ, Հայկական հարցը այլևս «կյանքի չի կոչվելու»:

Կովկասի փոխարքան, դեկավարվելով իր իսկ կողմից առաջադրված կարգախոսով, ձեռնամուխ եղավ ռուսական սահմաններում ապաստան գտած արևմտահայերին «իրենց հարազատ վայրերը» վերադարձնելուն: Սազոնովին հղած նամակում նա նշում էր, որ հայ գաղթականների վերադարձը Արևմտյան Հայաստան «լրջորեն կթեթեացներ (Արևմտյան Հայաստանում գտնվող – Գ. Գ.) բանակի պարենավորման գործը»:

Եթե Նիկոլայ Նիկոլաևիչը փորձում էր Արևմտյան Հայաստան վերադարձվող հայ գաղթականների ձեռքերով պարեն հայթայթել ռուսական բանակի համար, ապա երիտթուրքերը նրանց խոստանում էին Հայաստա-

նին ինքնավարութուն տալ ռուս-թուրքական 1914թ. հունվարի համաձայնագրի սահմաններում, եթե նրանք զենքը դարձնեին ռուսների դեմ²⁴:

Գերմանիան իսկույն պաշտպանեց իր դաշնակցի այդ «նախաձեռնութունը»: Սակայն այդ հերթական անպատկառ խաղը չգործեց: Չգտնվեց մի հայ, որ նորից հավատ ընծայեր թուրքերին:

1916թ. ամռանը Ռուսաստանի և նրա դաշնակիցների միջև Հարաբերութունների սառեցման լուրջ գործոններ նշմարվեցին: Նիկոլայ II-ը Ս. Սադոնովին, որը ռուս-անգլո-ֆրանս գաղնակցության ջատագովն էր, օգոստոսին ազատեց արտգործնախարարի պաշտոնից: Նրա փոխարեն արտգործնախարար նշանակվեց երկրի վարչապետ Բ. Շտյուրմերը, որն հայտնի էր որպես գերմանամետ գործիչ և որին 1916թ. սկզբներին վարչապետ նշանակելը անսքող դժգոհութուն առաջացրեց Անգլիայում և Ֆրանսիայում: Իսկ այդ նոր նշանակումը դիտվեց որպես ռուս-գերմանական անջատ պայմանագիր կնքելու նախանշան: Սայքս-Պիկոյի համաձայնագիրը չեղյալ հայտարարելու վտանգ ծագեց: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի ճնշման տակ Նիկոլայ II-ը չդիմեց այդ քայլին: Նոյեմբերի վերջերին արտգործնախարար նշանակվեց Ն. Պոկրովսկին: Դաշնակիցները շարունակեցին մնալ նույն բլոկում:

Այս իրադարձութունները ստիպեցին Ֆրանսիային ակտիվացնելու իր գործունեութունը հայերի օգնությամբ Փոքր Հայքի «սեփականաշնորհումն» իրականացնելու համար:

1916թ. գեկտեմբերի 14-ին Եվրոպայում Հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս-Նուբար փաշան Փարիզից գաղտնի նամակով «չտապել է» տեղյակ պահել Ռուսաստանի Պետական Դոմայի անգամ Մ. Պապաջանյանին, թե «Ֆրանսիական կառավարութունը, ի նկատի առնելով մոտ կամ հեռավոր ապագայում հնարավոր գործողութունը Ասիական Թուրքիայում, որոշել է «Արևելյան լեգեոն» անվան տակ կազմակերպել հայ և սիրիացի կամավորների մի դուևդ:

Մենք, — շարունակում է Պողոս-Նուբար փաշան, — բնականաբար, առանց տատանվելու պատասխանեցինք մեզ ուղղված կոչին և որոշեցինք մեր տրամադրության տակ եզած ըոլոր միջոցներով խրախուսել Եգիպտոսի, դաշնակից երկրների և Ամերիկայի մեր հայրենակիցներին, որ նրանք որքան կարելի է մեծ թվով զինվորագրվեն նոր լեգեոնի մեջ ... Մենք ֆրանսիական կառավարության հետ քննության ենք առել այն թուրքահայերին օգտագործելու հնարավորութունը, որոնք այսօր ազատ են կացուցված, նպատակ ունենալով նրանց բերել տալ Ֆրանսիա զինվորագրվելու «Արևելյան լեգեոնի» մեջ»:

Պողոս-Նուբար փաշան տեղյակ էր պահում, որ ինքը կոչ է արել նաև «Կովկասի մեր բարեկամներին, որ նրանք բարեհաճեն ցույց տալ իրենց աջակցութունը Ֆրանսիա ժամանելու համար...»: Նա ակնկալում էր, որ Պապաջանյանը որպես Պետական Դոմայի անգամ կփութար ստանալու ռուսական կառավարության հավանութունը, քանի որ «Արևելյան լեգեոնը» դաշնակիցների ընդհանուր շահերին պետք է ծառայեր:

24 Раздел Азиатской Турции..., с. 211—212; Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 400—402, Esat Uras. Նշվ. աշխ., էջ 901—902:

Այս ձեռնարկումը պահպանում էր խիստ գաղտնի և ֆրանսիական կառավարությունը պարտավորվել էր, որպեսզի «գրաքննությունը թույլ չտա ոչինչ զետեղելու կամավորների մասին ոչ միայն հայկական, այլև մյուս լեզուներով հրատարակվող թերթերում»: Ասվածին Պողոս-Նուբար փաշան ավելացրել է, որ ինքը Ֆրանսիայի կառավարության կողմից ստացել է «պաշտոնական հավաստիքներ, թե հաղթանակից հետո մեր ազգային ձգտումները կստանան լիակատար բավարարություն»: Խոսքը նաև Կիլիկիայի մասին էր, որը, ըստ Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի (որին հայ գործիչները գեռևս անտեղյակ էին), պետք է անցներ Ֆրանսիային:

«Ֆրանսիան, — ոգևորությամբ գրել է Պողոս-Նուբար փաշան, — մնալով հավատարիմ ազատության սկզբունքներին և մեծահոգի ավանդույթներին, ճշված հայերին ազատելուց հետո հնարավորություն կտա նրանց վերականգնելու իրենց ազգային դեմքը և գրավելու այն դիրքը, որ պատկանում է նրանց քաղաքակիրթ աշխարհում...»: Հավատալով իր ասածին, նա կոչ էր անում հայերին, «որպեսզի Ֆրանսիային տրվեն որքան կարելի է մեծ թվով մարտիկներ այն ձեռնարկի համար, որ նա սկսել է հանուն մեր հայրենիքի ազատության»:

Երբ Պողոս-Նուբար փաշայի այս նամակը քննարկվեց Թիֆլիսում գտնվող հայոց Ազգային բյուրոյի նիստում, այն, գրում է Լեոն, «գրեթե միաձայն մերժվեց: Ապուշներից ապուշը կլինեինք, եթե մի անգամ սոսկալի կերպով խաբվելուց հետո նորից հավատայինք այդպիսի խոստումներին»:

Կովկասահայերը մերժեցին Պողոս-Նուբար փաշային, բայց ինքը, այնուամենայնիվ, կուլ գնաց ֆրանսիացիների խոստումներին և արևմտյան երկրներում «հաջողեցրեց մի նոր կամավորական շարժում «Արևելյան լեգեոնի» համար...»²⁵: Ֆրանսիական կառավարությանն այս անգամ էլ հաջողվեց խաբել հայերի մի ստվար զանգվածի, որոնց ներկայացնում էր Պողոս-Նուբար փաշան:

1917թ. փետրվարին ցարիզմի տապալումը և բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում մեծ ճեղք առաջացրեց Անտանտի բլոկում և հարվածի տակ դրեց այնքան խնամքով մշակված Ասիական Թուրքիայի բաժանման ծրագիրը:

Փետրվարյան հեղափոխության հաղթանակը «վիճակախաղի» մեծ շահում էր Թուրքիայի համար: Ռուսական զորքերի հետագա առաջխաղացումը Կովկասյան ճակատում դադարեցվեց: Հարցականի տակ գրվեց Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի մնալու հնարավորությունը: Այս ամենը, ինչպես ճիշտ նկատել է լորդ Կինրոսը, «փրկեց թուրքերին Ասիայում պարտվելուց և հետագայում երաշխավորեց նրանց մահապատժի հետաձգումը»²⁶:

25 Լ. Ե. Ունցյալից. Թիֆլիս, 1925, էջ 345–351: (Այդ լեգեոնը հետագայում մտավ ֆրանսիական բանակի կազմի մեջ և նշանավորվեց 1918թ. սեպտեմբերին Պաղեստինի Արարա բարձունքի վրա թուրքական զորքերի դեմ տարած հաղթանակով չխուսափելով կորուստներից):

26 L o r d K i n r o s s. The Ottoman Centuries. The Rise and Fall of the Turkish Empire. London, 1977, p. 608.

Անգլիան և Ֆրանսիան դեռևս չէին ուզում հաշտվել Սայքս-Պիկոյի համաձայնագրի հնարավոր տապալման մտքի հետ: 1916թ. դեկտեմբերին Անգլիայում իշխանություն գլուխ եկած Լլոյդ Ջորջը պատերազմը հաղթանակով ավարտելու կամք էր դրսևորում: Իսկ Իտալիան, ինչպես միշտ, պահը հարմար գտավ իր «բաժինը» ձեռք բերելու համար, չնայած Թուրքիայի հետ պատերազմի մեջ էր մտել խիստ ուշացած՝ 1915թ. օգոստոսի 20-ին:

1917թ. ապրիլի 19–21-ին իտալո-ֆրանսիական սահմանի վրա գտնվող Սեն-ժան դը Մորյեն երկաթուղային կայարանում Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պրեմիեր մինիստրներ Լլոյդ Ջորջը, Ա. Ռիբոնը և Ս. Սոնինոն առանց Ռուսաստանի մասնակցության կնքեցին համաձայնագիր, ըստ որի հատակեցվեցին Իտալիային անցնելիք տարածքների սահմանները, ինչպես նաև ճշտվեցին Անգլիային, Ֆրանսիային և Իտալիային անցնող գոտիներում փոխադարձ շահերի պաշտպանման երաշխիքները: Այդ համաձայնագիրը դադարի պահվեց մինչև 1917թ. օգոստոսը, երբ այն կնքած տերությունները հուշագրեր փոխանակեցին միմյանց հետ: Միայն դրանից հետո ժամանակավոր կառավարությունը տեղյակ պահվեց առանց իրեն ստորագրված համաձայնագրին:

Պատերազմի ավարտից հետո, երբ Իտալիան այլևս ռազմական խոչը ուժ չէր ներկայացնում, Փարիզի խաղաղության խորհրդաժողովում Լլոյդ Ջորջը, Ժորժ Կլեմանսոն և Վուդրո Վիլսոնը որոշեցին Սեն-ժան դը Մորյենի պայմանագրով Իտալիային տրվող Իզմիրը (Զմյուռնիան) տալ Հունաստանին (որի գործերը 1919թ. մայիսին արդեն օկուպացրել էին այն):

Երբ դաշնակիցները ձեռնամուխ եղան Փարիզի խաղաղության խորհրդաժողովի հրավիրմանը, Լլոյդ Ջորջը 1918թ. դեկտեմբերին հայտնեց Ժորժ Կլեմանսոնին, որ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը այլևս ուժի մեջ չի կարող համարվել: Դա ձևական հայտարարություն էր, քանի որ այդ համաձայնագիրն արդեն իր ուժը կորցրել էր, երբ Ռուսաստանը դուրս էր եկել Անտանտի բլոկից:

1919թ. փետրվարի 17-ին Փարիզի խորհրդաժողովի աշխատանքների ժամանակ իր մահկանացուն կնքեց Ասիական Թուրքիայի բաժանման համաձայնագրի «ճարտարապետը»՝ Անգլիայի արտգործնախարարության Մերձավոր Արևելքի դժով փորձագետ Մարկ Սայքսը:

Տարիներ անց Կլեմանսոն Սայքս-Պիկոյի համաձայնագրով նախանշված սահմանների գիծը համարեց «խոր տգիտություն» արգյունք: Իսկ Լլոյդ Ջորջը զարմանք հայտնեց, թե «ինչպես կարող էր արդքան նուրբ խելք ունեցող մարդը, ինչպիսին որ Մարկ Սայքսն էր, իր ստորագրությունը գնել նման համաձայնագրի տակ: Նա միշտ ամոթ էր զգում դրանից... նա կատարել էր միայն հրահանգներ, որոնց ինքը կտրականապես դեմ էր»²⁷: Կլեմանսոն և Լլոյդ Ջորջը «խոր տգիտություն» էին համարում իրենց կառավարությունների խոստումը՝ սևծովյան նեղուցներն ու Կ. Պոլիսը Ռուսաստանին հանձնելու մասին:

Սայքս-Պիկոյի համաձայնագիրը այդպես էլ կյանքի չկոչվեց. սակայն Ասիական Թուրքիայի բաժանման խնդիրը և Հայկական հարցը չհանվեցին օրակարգից: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ղաշնակից տերությունները ձեռնամուխ եղան իրենց չիրագործված ծրագրերի վերակենդանացմանը, բայց արդեն նոր պայմանների թելադրանքով և առանց խորհրդային դարձած Ռուսաստանի մասնակցության²⁸:

АРМЕНИЯ В ПЛАНАХ РАЗДЕЛА АЗИАТСКОЙ ТУРЦИИ
(1915–1917 гг.)

ГАЛУСТ ГАЛОЯН

Р е з ю м е

Политические игры великих держав в отношении Армении полностью раскрылись в годы первой мировой войны, когда они в глубокой тайне разрабатывали план раздела Азиатской Турции. В статье на основании первоисточников разоблачается суть этих игр, нашедшая отражение в соглашении Сайкс-Пико, в котором Армения не рассматривалась как субъект международных отношений, так как державы Антанты готовились разделить ее области между собой. Победа революции в России и ее выход из войны решили судьбу соглашения Сайкс-Пико. С окончанием войны Ллойд Джордж заявил, что оно недействительно. Но союзники не отказались от плана раздела Азиатской Турции. В новых условиях это стало предметом обсуждения на Парижской мирной конференции, но уже без участия России.

ARMENIA IN THE PLANS OF PARTITION OF ASIATIC TURKEY
(1915-1917)

GALUST GALOYAN

S u m m a r y

Political trickeries of the Great Powers towards Armenia came out in the years of World War I when they deep in secrecy elaborated the plan of Asiatic Turkey's partition. On the basis of the reliable sources the author of the article exposes the gist of those intrigues that found their reflection in the Sayks-Pico's agreement, in which Armenia was not considered as a subject of international relations because the Powers of Entente prepared for partition of her regions among themselves. The victory of revolution in Russia and her going out of the War decided Sayks-Pico's agreement's destiny. With the War's completion Lloyd George stated that it was void. But the Allies did not give up the plan of partition of Asiatic Turkey. In new conditions it became a subject of discussion in Paris peace conference, but already without participation of Russia.

²⁸ Տե՛ս Գ ա լ ո ս տ Գ ա լ ոյ ա ն. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999: